

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՊԻՐԻ ԷԶՄԻԱԾԻՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա-ի հրակրով, 1972 թուականի Յունիսի 16ին Մայր Աթոռ ժամանեց Հոռմական Եկեղեցու պատուիրակութիւն, իրեւ ներկայացուցիչ Նորին Սրբութիւն Պողոս Զ Սրբազն Քահանայակեսի:

Հոսմի սուրբ Եկեղեցու Գահակալը, իր պատուիրակներին ուղարկելով Ա Էջմիածին, ցանկացել էր արտայատել իր բարձր գնահատանքը այն այցելութեան համար, որ Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարել էր ի Հոսմ 1970 թուականին:

Պատուիրակութեան կազմում էին Հոսմի Սուրբ Աթոռի Քրիստոնեան Եկեղեցի Սիոնիթեան Քարտուղարութեան Նախագահ՝ Նորին Գերազանցութիւն Կարդինալ Ժան Վիլլրանիսը, Մարտելի արքեպիսկոպոս՝ Գերաշնորհ Ռոժե Էշեգարայը, Սուրբ Ղազարի Միսիոնեան Միարանութեան ընդհանուր քարտուղար՝ Հայր Ներսէս Տէր Ներսէսեանը և Քրիստոնեաների Միութեան Քարտուղարութեան գրանցեակի պետ՝ Հայր Զոն Լոնգը:

Հոսմի Սուրբ Աթոռի բարձր պատուիրակութիւնը նկել էր Հայոց Հայրապետին բերելու Նորին Սրբութիւն Պողոս Զ Սրբազն Պապի խաղաղութեան և եղբայրական սիրոյ համակը:

Ուրբաթ օր ժամը 18.30ին Երևանի օրանաւայանում յարգարժան հիւրերին դիմաւորեցին և բարի գալուստ մաղթեցին Արեւմտեան Երոպայի Հայրապետական պատուիրակ Տ. Սերովը Արքեպիսկոպոս Մանուկեանը, Արարատեան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս Արքեպիսկոպոս Տէր Ստեփանեանը, Մայր Աթոռի միջնեկեղեցական յարաքերութիւնների վարիչ Տ. Արտէն Վարդապետ Բերքերեանը, ընդհանուր քարտուղար՝ Պարզել Շահբազեանը և Տ. Գեորգ Վարդապետ Մերայդարեանը:

Օդանաւակայանից հիւրերը առաջնորդուեցին Երեւան, Կաթողիկոսարանի բնակելի շենքը, որը դրուած էր նրանց տրամադրութեան տակ:

Հետեւեալ օրը, Չարաթ, Յունիսի 17ին, առաւոտեան ժամը 11ին, հիւրերը Տ. Սերովը և Տ. Կոմիտաս Արքեպիսկոպոսների ուղեկցութեամբ ժամանեցին Ա Էջմիածին, որ զանգերի դողանչների տակ հանդիսառ կերպով մուտք գործեցին Մայր Տաճար և աղօթեցին Խշման Սուրբ Սեղանի առաջ:

Մայր Տաճարում հիւրերին ընդունեց Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Յովիկ Եպիսկոպոս Մանթուրեանը՝ շրջապատուած Մայր Աթոռի միաբան Եերով:

Այնուհետեւ հիւրերը առաջնորդուեցին վեհարան և ընդունեցին Ամենայն Հայոց Հայրապետի կողմից:

Քարելամական կարճ զրոյից յետոյ, յարգարժան հիւրերը դիտեցին Մայր Աթոռի թանգարաններն ու շինութիւնները, այցելեցին Սուրբ Հոհիսիմէի և Սուրբ Գայիանէի վանքերը և ապա ժամը 15ին հրակիրուեցան վեհարան:

Նոյն օրը երեկոյեան Մայր Տաճարում տեղի ունեցաւ երեկոյեան ժամագութիւն և ապա՝ էկումէնիկ համատեղ աղօթքի արարողութիւն, որից յետոյ հիւրերը ներկայ եղան Հոգեւոր Ծեմարանի հանդիսարանում իրենց պատին կազմակերպուած ուսանողական հանդէսին:

Ցունիսի 18ին, Կիրակի օրը, մեծարգոյ հիւրերը ներկայ եղան Մայր Տաճարում Ա. Պատարագի արարողութեան: Պատարագեց Տ. Կոմիտաս Արքեպիսկոպոսը: Նորին Արքութիւնը քարոզեց և վերջում հաւատացեալ ժողովը դիմումին ներկայացրեց պատուարժան հիւրերին:

Յաւարտ Ա. Պատարագի վեհարանի գահարանում տեղի ունեցաւ հանդիսաւոր ընդունելութիւն, որին ներկայ էին, բացի հիւրերից, Մայր Աթոռոյ Շիարանութիւնը, Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամները և Երեւանի մշակութային ու հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ:

Ընդունելութեանը ներկայ էր ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ա. Գևառպետինը:

Գահարանում ողջոյնի խօսքով հիւրերին դիմեց Տ. Սերովը: Արքեպիսկոպոսը, որից յետոյ Մարտելի արքեպիսկոպոս Ռոժեկ: Էջեգարայը կարդաց Հոռմի Սրբազն Քահանայապետի եղբայրական սիրոյ ուղերձը՝ ուղղուած Հայոց Հայրապետին:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ Վ. Ա. Զ. Գ. Է. Ն Ա.Ի.Ն

Զերդ Սրբութիւն,

Խնդրեցինք Մեր սիրելի եղբօրը՝ Կարդինալ Ժան Վիլբրանդուին, այցելել Զերդ Սրբութեանը Սուրբ Էջմիածնի Զեր պատմական Աթոռում՝ ի գույնի Հոռմի Եկեղեցու մի պատուիրակութեան: Ցանկանում ենք, որ այս քայլը լինի Մեր երախտագիտական զգացմունքի մի նոր արտայայտութիւն այն այցելութեան համար, որ Դուք տունեցիք Մեզ Հոռմում երկու տարի առաջ և որի մասին Մեզ մի գեղեցիկ լուշագիրը ուղարկելու նրազգացութիւնն ունեցար:

Բացի այդ, կը ցանկանայինք, որ այս քայլը հանդիսանար նաև մեր եւ մեր եկեղեցիների միջև արդէն գոյութիւն ունեցող հաղորդութիւնը խորացնելու քաղաքանը մի արտայայտութիւն և դրսուրեր Մեր կամեցողութիւնը՝ օգոստունու Սուրբ Հոգու կողմից ընծայուած բոլոր առիթներից՝ առաջ ընթանալու համար այդ ճանապարհի վրայ:

Մենք ուրախ ենք, որ որպէս հետևանք Զերդ Սրբութեան կողմից Մեզ տրուած այցելութեան, արդէն զարգացել է փոխադարձ սիրոյ եւ անկեղծ գործակցութեան մի նոր ոգի Քրիստոսի Եկեղեցու ծառայութեան գործում. աշխարհի շատ մասերում կաթողիկ համայնքներն ու հայկական համայնքները ձեռք են բերել ի Քրիստոս իրենց միութեան մի նոր գիտակցութիւն:

Այժմ, երբ Մեր ներկայացուցիչները գալիս են Զերդ Սրբութեան մօտ, Մենք կը ցանկանայինք վերատին հաւատիացնել Զեզ, թէ որքան ուրախ ենք զգում Մեզ այս զարգացումների համար եւ որքան վստահ, որ ինքը՝ Եկեղեցու Տէրը պիտի շարունակի, իրեն յատուկ ճանապարհներով, առաջնորդել մեզ դէպի ամրոջական կատարումը խաղաղութեան եւ հաշտութեան սպասաւորման, որ նա վստահել է իր Եկեղեցու հովիններին (Առնիթ. 2, 5-18):

Մաղթելով, որ Ամենակարողն Աստուած իր օրհնութիւններով լցնի Զերդ Սրբութեանը, ձեր եկեղեցու եպիսկոպոսական դասին, հոգեւորականութեանը և հաւատացեալներին, կրկին յայտնում ենք Զեր Մեր եղալրական սիրոյ ողջ զգացմունքը ի Տէր մեր Յիշու Քրիստո:

Պ Օ Ղ Ո Ս Զ

Վատիկան,

9 Մայիսի 1972

Ապա տեղի ունեցած պաշտօնական ճառերի փոխանակում Վեհափառ Հայրապետի և Կարդինալ Վիլլբրանդսի միջև:

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂԵՍԼ
Ն. ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ ԿԱՐՏԻՆՍԱԼ Ժ. ՎԻԼԲՐԱՆԴՍԻՆ

Զերդ Գերազանցութիւն,

Ի Քրիստո սիրով, բարի գալուստ կը մաղթենք Զեզի և Զեր բարձր պատուիրակութեան անդամներուն, որ կու զար յախտեական քաղաք Հռոմէն, իրեւ պատգամաբերները Ն. Ս. Պողոս Զ Սրբազն Քահանայապետին:

Հայաստանեալց Առաքելական Եկեղեցին և յաւլիապէս Մենք յոյժ երջանիկ ենք Զեզ ողջունելու այստեղ Ս. Էջմիածնի մէջ, բազմադարեան գերագոյն կեդրոնը մեր ժողովուրդի քրիստոնէական հաւատքի, Զեր այցելութեան մէջ տեսնելով շարունակումը եղալրական սիրոյ այն յարաքերութիւններուն, որոնք սկիզբ առին մեր եկեղեցիներուն միջեւ, մանաւանդ երկու տարիներ առաջ Մեր պաշտօնական այցելութեամբ Հռոմ: Մեր այդ այցը, պատմական այնպիսի վկայութիւն մը հանդիսացաւ որ մեր Եկեղեցին և անձամբ Մեզի համար պիտի մնայ ոչ միայն անմոռանալի, այլ նաև լուսաւոր անկիւնադարձ մը մեր յնտագալ կեանքի ճանապարհին:

Այսօր Զեր ներկայութեան, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Գահէն անգան մը եւս կը խոստվածինք և կը հաւատանք համարդիստոնէական եղալրութեան խւալին և եկեղեցիներու հետզինտէ առաւել մերձեցման ու համագործակցութեան, Քրիստոսի սիրոյն մէջ միանալու տենչով ոգեշնչուած:

Երբ կը նայինք մեր եւեւ, անցնող դարերուն, ինչքա՞ն կ'ափսոսանք այսօր, որ այդքան երկար, շատ երկար ժամանակ, Քրիստոսի անունով ապրող ու գործող եկեղեցիներ չեն կարողացած, գոնէ կրօնական կեանքի մէջ, իրականացնել Քրիստոսի մեծագոյն պատուիրանները՝ սիրոյ և յաղաղութեան: Ողբերգութիւն մը եղած է այդ, որ ահա մեր օրերուն կը սկսի վերջ գըտնիլ: Մենք բոլորս երջանիկ կը զգանք զմեզ որ մեր օրերուն է որ կը կատարուի այդ բարեշրջումը: Եւ եթէ մեզմէ ոմանք կը կարողանան դերակատարները հանդիսանալ երջանիկ այս նոր իրադրութեան, այդ կրնան նկատել անոնք իրենց կեանքի մեծագոյն մխիթարութիւնը: Անկասկած թէ նման մեծ դերակատարներ հանդիսացան նաև՝ հանգուցեալ Յովհաննէս ԻԳ Պապը, և Զեր մեծ Եկեղեցոյ այժմու Քահանայապետը՝ Պողոս Զ:

Կրօնական տեսակէտէ, մեր ժամանակները կը բնորոշուին քրիստոնէական եկեղեցիներու՝ «աշխարհին բացուելու» և աշխարհին հետ «տիալոկի» մէջ ըլլալու ձգումով ու անհրաժեշտութիւնով, կրօնական, գիտական, մշակութային և ընկերային-քաղաքական մակարդակներու վրայ:

«Բացուիլ աշխարհին» կրօնական կեանքի մակարդակի վրայ, կը ճը-
շանակէ ապրիլ և գործել եկեղեցիներու մերձեցման, միութենական ոգիով,
Եկումէնիկ ոգիով:

«Բացուիլ աշխարհին» գիտութեան մակարդակի վրայ, կը ճշանակէ
համաձայնեցման հիմքեր գտնել գիտութեան և կրօնքի միջեւ, այսինքն՝ բնա-
կան պատճառականութեան գիտական սկզբունքին և գերբնական հաւատա-
լիքներու կրօնական ուսմունքին միջեւ:

«Բացուիլ աշխարհին» մշակութային մակարդակի վրայ, կը ճշանակէ
օրկանապէս հաղորդ մնալ արդի աշխարհի մշակոյթին, մէկ կողմէ որդեգրե-
լով Եկեղեցոյ կեանքին մէջ այդ մշակոյթի, արուեստներու որոշ ըմբռնումներ
և արտայատութեան ձեւեր, միս կողմէ ձգուելով կրօնական բազմադարեան
մշակոյթի, արուեստներու արժեքները արդիականութեան լոյսին բերել և ա-
նոնցով բնադատորել արդի մշակոյթի զարգացման ընթացքը:

«Բացուիլ աշխարհին» ընկերային մակարդակի վրայ, կը ճշանակէ
գտնել իմաստուն ճանապարհը որ Եկեղեցիները իրենց ճակատագիրը չկապէն
որոշ դասակարգային շահներու, այլ ճշմարտապէս հարազատ մնալով անտա-
րանական ուսմունքին, դառնան քարոզողները ընկերային արդարութեան ու
հաւասարութեան և մարդու կողմէ մարդու շահագործման դրութեան վերաց-
ման:

Եւ վերջապէս «աշխարհին բացուիլ» բաղաբական մակարդակի վը-
րայ, պիտի ճշանակէր դասանիլ և պաշտպանել պետութիւններու խաղաղ գո-
յակցութիւնը և համագործակցութիւնը, բոլոր մեծ ու փոքր ազգերու իրաւական
հաւասարութիւնը, անոնց ազատ ինքնորոշման իրաւունքը և բոլոր տեսակի
անհանդուրժութեանց ու խորականութեանց վերացումը, միջազգային հաս-
տատ, անաշառ օրէնքներու ուժով, երաշխատրուած Միացեալ Ազգերու Կազ-
մակերպութեան բարձր հիջմակութեամբ:

Մեզի այնպէս կը թուի թէ Եկումնենիկ շարժման հետ անքակտելի կեր-
պով կապուած են այս բոլոր հարցերը: Եկումնենիկ շարժման գաղափարը ան-
ջատել մեր օրերու աշխարհէն, մեր շուրջ ալեկոծուող կեանքն և անոր
նորանոր յառաջընթաց զգացումներէն, ինչ որ պիտի ճշանակէր անտեսել՝ կը-
րօնական հաւատքը իբրեւ ոգեկան գործօն ուժ պահպանելու անհրաժեշտու-
թիւնը նոր կեանքի պայմաններու մէջ:

Մեր կարծիքով, ուղիղ չէ մտածել թէ Եկումնիզմը միմիայն Եկեղեցի-
ներու միութեան շարժում մըն է: Այդպէս մտածել ու գործել պիտի ճշանակէր
հեռու մնալ մեր օրերու աշխարհէն, մեր շուրջ ալեկոծուող կեանքն և անոր
նորանոր յառաջընթաց զգացումներէն, ինչ որ պիտի ճշանակէր անտեսել՝ կը-
րօնական հաւատքը իբրեւ ոգեկան գործօն ուժ պահպանելու անհրաժեշտու-
թիւնը նոր կեանքի պայմաններու մէջ:

Հակուած ենք, որեմն, մտածելու թէ Եկումնիզմը միմիայն Եկեղեցի-
ներու մերձեցման և ապագայ միութեան համար գործող շարժում մը չէ, այլ
նաև ու մանաւանդ շարժում մը՝ միացեալ ուժերով ու ճիգերով պաշտպանելու
քրիստոնէական հաւատքը և զայն տիեզերական դարձնելու արդի աշխարհի
մէջ:

Մենք պէտք է գիտնանք փառուել ու գտնել Քրիստոսի Անտարանի
գոյութեան իմաստն ու անհրաժեշտութիւնը մարդկութեան ապագայ կեանքի
կառուցման ճանապարհին վրայ: Մենք կը հաւատանք թէ կառուցուող ապա-
գայ աշխարհը եւս պիտի լուսաւորուի Քրիստոսվ, վասնզի վկալ է երկիազ-
բանական պատմութիւնը թէ Քրիստոսի Անտարանը՝ յախտենական բարոյա-

կան ճշմարտութիւններու շունմարան է, մշտանորոգ ոգևկանութիւն է, տեսական յեղափոխութիւն է:

Աշխարհին բացուելու ձգտումին, մեր օրերու ամենահրամայական արտայայտութիւններէն մին, կը շարունակէ մնալ աշխարհի խաղաղութիւնը պահպանելու և ամրապնդելու գաղափարը, որ մեր աղօքքներու, մեր մտածումներու և մեր գործունեութեան առանցքը պէտք է կազմէ այսօր:

Այս կը նկատենք կրօնական մեր գերազոյն պարտականութիւնը, այլապէս ժխոտած պիտի ըլլայինք մեր ուխտը Աստուծոյ հանդէպ որ «խաղաղութեան Աստուած» է: Այս զգացումը մեր գիտակցութեան մէջ գուցէ առանձ տիրական է, որովհետեւ Հայ Եկեղեցին և Հայ ժողովուրդը աւելի քան հազար տարի տառապած են ու նահատակուած ուազմամոլ ու ծաւալապաշտ պիտութիւններու սանձազերծած պատերազմներու հետևանքով: Մեր ժողովուրդը այդ ճակատագիրը ունեցաւ նաև մեր դարուն, նախ Սուածին Համաշխարհային Պատերազմին՝ Օսմաննեան կայսրութեան կազմակերպած ցեղասպանութեամբ, երբ քնաջնջուեցաւ մօտ երկու միլիոն հայ քրիստոնեայ ազգաբնակչութիւն Արևմտեան Հայաստանի մէջ, և ապա Համաշխարհային Երկրորդ Պատերազմին՝ երբ նացիստական յարձակման դէմ, հայրենական մեծ պատերազմին, զոհուեցան Հայ ժողովուրդի աւելի քան 300,000 զաւակներ, իրենց ուս և այլ ազգի սովորական միլիոնաւոր հերոսներու կողքին:

Մենք չենք կամենար որ կրկնուին այլնս նման ողբերգութիւններ, ոչ մէկ տեղ աշխարհի վրայ:

Սիա թէ ինչո՞ւ Մենք ուրախութեամբ ողունեցինք՝ վաւերացումը Սուվետ-Գերմանական՝ ուժի գործադրումէն հրաժարելու դաշինքին, և խաղաղ գոյակցութեան նպաստող այն պատմական համաձայնագրերը որոնք վերջիր ստորագրուեցան Մովուայի մէջ, Սովետական Միութեան դեկավարներու և Միացեալ Նահանգաց ճախագահին միջեւ:

Սուրբ Էջմիածնի Սիանանի առաջ պիտի մնանք միշտ աղօթող որ հետզիւտէ աճի ու զօրանայ բարի կամեցողութիւնը և խաղաղարար ոգին պիտութիւններու բոլոր դեկավարներուն միջեւ:

Իբրև Հոգուապես Հայ Եկեղեցիին, մեր ժողովուրդի հետ միասին մեր բոլոր յուսերը, մեր բոլոր ապագայի երազանքները կապած ենք աշխարհի խաղաղութեան և ժողովուրդներու բարեկամութեան դատին հետ:

Չերդ Գերազանցութիւնն, Մենք երջանիկ ենք որ Զեր այցելութիւնը Ս. Էջմիածին, առիթ ընծայեց Մեզի արտայալուն Մեր այս մտածումներն ու խոհերը, քաջ գիտանով և մեծապէս գնահատելով Զեր մեծ Եկեղեցւոյ և յատկապէս Սուրբ Պետրոսի Աթոռի Գահակալ Ն. Ս. Պողոս Զ-ի՝ Ս. Հոգիով Աերշնչուած կոչերն ու անդով ջանքերը ի խնդիր սիրոյ և խաղաղութեան ամրապնդման մարդկանց սրտերուն և աշխարհին մէջ:

Կը խնդրենք Զեզմէ որ Զեր վերադարձին Հռոմ, տանիք Զեր Սրբազն Քահանայապետին մեր Եկեղեցւոյ քրիստոնէական ողջունը և Մեր եղբայրական յարգալից սիրոյ հաւաստին, Մեր սրտէն քիած մաղթանքներով որ Տէրը իր լոյսով փառաւորէ անոր առաքելութեան ճամբան այժմ և միշտ:

«Եւ Աստուած իմ լի արասցէ զամենայն պէտս Զեր ըստ իրում մեծութեան՝ փառօք ի Քրիստոս Յիսոս: Այլ Աստուծոյ և Հօր մերում փառը յափուեան յախտենից ամէն» (Փիլիպ. Դ, 19-20):

Ժամը 15ին վեհարանի ճաշաբահում հիւրերի պատուին տրուեց պաշտօնական ճաշկերոյթ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 18ին հիւրերը այցելեցին Սուրբ Մեսրոպ Մաշտոցի դամբարանը Օչականում:

Յունիսի 19ին, Երկուշաբթի օր, պատուիրակութեան անդամները ա-ղօթեցին Ծիծեռնակաբերդի հայ ճահատակաց յուշարձանի առջև, ապա եղան Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարանը և այնտեղից ողերութեցին Ս. Գևորգի վանքը, որ ճրանց ցոյց տրուեց շերմ ընդունելութիւն: Վաճիքի վա-նահայրը, ի պատի հիւրերին, տուեց ճաշկերոյք:

Պատուիրակութեան անդամները այցելեցին նաև Գառնի և դիտեցին վերանորոգուղ հեթանոսական տաճարը:

Նոյն օրը երեկոյեան ժամը 20ին հիւրերը ներկայ եղան իրենց պատ-ին Մայր Տաճարում կազմակերպուած հոգեւոր համերգին: Մայր Տաճարի երգչախումբը, խմբավար Պր. Խորեն Մելիքանաչեանի ղեկավարութեամբ, կատարեց հայկական, ոռոսական և արեւմտաւերոպական հոգեւոր երգեր:

Համերգից յետոյ Վեհափառ Հայրապետը վեհարանում ընդունեց Կարդինալ Վիլլբրանդիսին և պատուիրակութեան միւս անդամներին: Տեղի ու-նեցաւ յուշանուերների փոխանակում, որից յետոյ Հայոց Հայրապետը, եղբար-րական սիրոյ ողջագործումով, հիւրերին մաղթեց բարի ճանապարհ:

Յաջորդ առաօտեան, Յունիսի 20ին, Երեւանի օդանաւակալանում Մայր Աթոռի միաբանութեան և պաշտօնելութեան ներկայացուցիչները ողջեր-ը մաղթեցին բարձրաստիճան հիւրերին, որոնք մեկնեցին Հոռոմ:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

21 Յունիսի, 1972

Ս. Էջմիածին